



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 8**

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝**

**2016 Թ. ՄԱՐՏԻ 23-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

***Օրակարգում՝***

1. Ֆակուլտետի ռազմավարական ծրագրի քննարկում և հաստատում:
2. Ավարտական աշխատանքների կատարման ընթացքը ամբիոններում:
3. Պետական ֆինանսավորվող ծրագրին ներկայացվող հայտերի քննարկում և հաստատում:
4. Ֆակուլտետում դասավանդվող գրականության առարկայից հանձնարարվող գրականության ծրագրերի և գրական նյութի կրճատման առաջարկությունների քննարկում:
5. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստը վարում էր ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը: Իր խոսքի սկզբում նա տեղեկացրեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 29 անդամներից այս պահին նիստին մասնակցում են 25-ը, ապահովված է անհրաժեշտ քվորումը: Բաց քվեարկությամբ միաձայն հաստատվեց գիտխորհրդի 8-րդ նիստի օրակարգը:

**1-ին հարցի** առիթով արտահայտվեցին պրոֆ. Ա. Ավագյանը և դոց. Ա. Սարգսյանը: Նրանք մասնավորապես նշեցին, որ ֆակուլտետի բոլոր ամբիոններին հանձնարարված է ուսումնասիրել իրենց ուղարկված ռազմավարական ծրագրի նախագիծը, կազմակերպել եռանդուն քննարկում և կարճ ժամանակամիջոցում ներկայացնել գիտխորհրդին:

Օրակարգի **2-րդ** հարցի առիթով ելույթ ունեցան ամբիոնների բոլոր վարիչները՝ մանրամասնորեն ներկայացնելով ավարտական աշխատանքների կատարման ընթացքը: Մասնավորապես նշվեց, որ, եթե զանց առնվեն որոշ շրջանավարտների թերացումների հետ կապված մեկ-երկու անցանկանալի դեպքերը, աշխատանքները հիմնականում ընթանում են բնական հունով. այս տարի առաջին անգամ որոշվել է ավարտական աշխատանքների նախապաշտպանությունները կազմակերպել հնարավորինս շուտ՝ մեկ ամիս կտրվածքով, որպեսզի շրջանավարտներին լայն հնարավորություն տրվի շտկելու իրենց թերացումները:

Օրակարգի **3-րդ հարցի** առիթով դարձյալ ելույթ ունեցավ պրոֆ. Ա. Ավագյանը: Նա ներկայացրեց պետական ֆինանսավորվող ծրագրին ներկայացվող հայտերը՝ մատնանշելով ժամանակացույցը, և խորհուրդ տվեց, որ հնարավորինս շատերը մասնակցեն հիշյալ ծրագրին:

Օրակարգի **4-րդ հարցի**՝ ֆակուլտետում դասավանդվող հայ գրականության առարկայից հանձնարարվող գրականության ծրագրերի և գրական նյութի կրճատման առաջարկությունների քննարկման առիթով ծավալվեց լայն բանավեճ: Երբեմն հայտնվեցին իրարամերժ կարծիքներ. վաստակաշատ մանկավարժ-գիտնականների մի մասը դեմ արտահայտվեց հայ գրականության առարկայից հանձնարարվող գրականության ծրագրերի և գրական նյութի կրճատման առաջարկություններին՝ գտնելով, որ ծրագրում անհաղթահարելի ոչինչ չկա, և բարեխիղճ ուսանողը կարող է առանց առանձնակի ջանքերի հասնել լավ արդյունքների. չէ՞ որ «Հայ գրականություն» առարկան ֆակուլտետում մասնագիտական է: Երկար բանավեճից հետո փոխզիջման արդյունքում հավանության արժանացավ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի պրոֆեսոր Վազգեն Սաֆարյանի գլխավորությամբ ստեղծված հանձնաժողովի ներկայացված ծրագիրը, որը թե՛ ծավալային և թե՛ բովանդակային առումներով բավարարում է այսօրվա ուսանողի պահանջները:

#### **Ընթացիկ հարցերում քննարկվեցին.**

ա/ **ԼՍԵՑԻՆ** – Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, բ. գ. թ., դոց. Վ. Պետրոսյանի կողմից ներկայացված «Հին հայերենի տարածամանակյա հնչույթաբանության հարցերն ըստ արդի լեզվաբանական պատկերացումների» նպատակային ծրագրի հայտի թեմայի հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Մակարյանը, Լ. Հովսեփյանը, Ա. Աբաջյանը և ուրիշներ:

Նշվեց, որ հայերենագիտության այդ ոլորտում առ այսօր չկա շատ թե քիչ ամբողջական ուսումնասիրություն: Այդ առումով թեման իսկապես արդիական է, և նրա արդյունավետ կատարման դեպքում (դրա նախադրյալները կան) իրենց լուծումը կարող են ստանալ հին հայերենի տարածամանակյա հնչույթաբանության հիմնական խնդիրները:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, բ. գ. թ., դոց. Վ. Պետրոսյանի կողմից ներկայացված «Հին հայերենի տարածամանակյա հնչույթաբանության հարցերն ըստ արդի լեզվաբանական պատկերացումների» նպատակային ծրագրի հայտի թեման:

բ/ **Լ Ս Ե Ց Ի Ն** - Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. Ասողիկ Սարգսի Բեքմեզյանի՝ «Տողամիջյան ընթերցումներ» հոդվածների ժողովածուն տպագրության երաշխավորելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը և դոց. Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ Ա. Բեքմեզյանի՝ «Տոդամիջյան ընթերցումներ» գիրքը հեղինակի՝ տարբեր տարիներին գրված հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածուն է, որտեղ քննվում են գրականության տեսության, գեղագիտության, գրական տեքստի վերլուծության վերաբերյալ տարաբնույթ հարցեր, առաջ են քաշվում գրական-գեղարվեստական ստեղծագործության ընթերցման նոր տեսանկյուններ: Ժողովածուն նախատեսված է բանասեր-ուսանողների, գրականությամբ և գրականագիտությամբ հետաքրքրվողների համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**- Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. Աստղիկ Սարգսի Բեքմեզյանի՝ «Տոդամիջյան ընթերցումներ» հոդվածների ժողովածուն երաշխավորել տպագրության:

զ/ Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի դասախոսների կազմած «Գրականության տեսության արդի խնդիրներ» ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը և դոց. Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ նման ժողովածուի անհրաժեշտությունը վաղուց էր հասունացել, քանի որ 20-21-րդ դդ. գրականագիտական միտքը հարստացել է նոր իրողություններով ու տեսություններով, որոնց մասին հայոց լեզվով անհրաժեշտ գրականություն չկա: «Գրականության տեսության արդի խնդիրներ» ժողովածուում ընդգծված նյութերը կարող են օգտակար լինել ոչ միայն ուսանողության, այլև ընդհանրապես գրականագետների, ինչպես նաև գրականությամբ հետաքրքրվողների համար:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - «Գրականության տեսության արդի խնդիրներ» ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

դ/ **Լ Ս Ե Ց Ի Ն** – «Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ. ձևաբանություն»-ը տպագրության երաշխավորելու հարցը /հեղինակներ՝ Բագրատ Ներսիսյան, Տեր-Մինասյան Աշոտ, Անահիտ Մովսիսյան, Զարիկ Աղաջանյան, Ռիտա Սաղաթեյան, Ռեբեկա Մարգարյան/:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, դոց. դոց. Լ. Թելյանը և Ա. Մարգարյանը:

Նշվեց, որ ձեռնարկում ներկայացված են ձևաբանությանը վերաբերող վարժություններ և գործնական աշխատանքներ: Դրանք ընդհանուր առմամբ համապատասխանում են հայ բանասիրության ֆակուլտետի համար նախատեսված ծրագրին: Ձեռնարկը կօգնի ուսանողներին ամրապնդելու իրենց տեսական գիտելիքները:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** – Հիմք ընդունելով նիստի մասնակիցների կարծիքները՝ «Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ. ձևաբանություն»-ը երաշխավորել տպագրության:

ե/ **Լ Ս Ե Ց Ի Ն** – Հայոց լեզվի ամբիոնի դոցենտ Զարիկ Խաչատուրի Աղաջանյանի՝ «Խոսքիմասային տեղաշարժերն արդի հայերենում» ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, դոց. դոց. Լ. Թելյանը և Ա. Սարգսյանը:

Նշվեց, որ «Խոսքիմասային տեղաշարժերն արդի հայերենում» ուսումնամեթոդական ձեռնարկը կազմված է բուհական և հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչներին, ծրագրերին համապատասխան և նպատակ ունի նպաստելու նյութին վերաբերող տեսական գիտելիքների հաղորդման և գործնական-քերականական ուսուցման արդյունավետ անցկացմանը: Ըստ էության տեսական-ուսուցողական արժեք ունի:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հիմք ընդունելով նիստի մասնակիցների կարծիքները՝ Զարիկ Աղաջանյանի՝ «Խոսքիմասային տեղաշարժերն արդի հայերենում» ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

զ/ **Լ Ս Ե Ց Ի Ն.** - *Հայոց լեզվի ամբիոնի* դոցենտի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին բ. գ. թ., դոցենտ **Շուշանիկ Սամսոնի Գևորգյանի**, *գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի* դոցենտի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին բ. գ. թ., դոցենտ **Ալվարդ Հովհաննեսի Սեմիրջյանի**, *մանկավարժության ամբիոնի* դոցենտի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մ. գ. թ., դոցենտ **Արմենուհի Աշոտի Աշիկյանի** մասնակցելու հարցերը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** - Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Յու. Ավետիսյանը, Ժ. Քալանթարյանը, Ն. Հարությունյանը և դոց. Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ բ. գ. թ., դոցենտ **Շուշանիկ Սամսոնի Գևորգյանը** 2002 թվականից աշխատում է հայոց լեզվի ամբիոնում՝ որպես ասիստենտ: Նրա գիտամանկավարժական գործունեությունն

արդյունավետ է. 2004-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Ժամանակի քերականական կարգի դրսևորումը վրացերենում և հայերենում» թեմայով: Տպագրել է ուսումնական աշխատանքներ՝ «Հայերենի եղանակաժամանակային ձևերը և վրացերենի բայաշարքերը», «Հայոց լեզու և խոսքի մշակույթ. Գիրք Բ» (համահեղինակներ՝ Յու. Ավետիսյան, Ա. Մարգարյան, Լ. Թեյլան և ուրիշներ), հրատարակել է գիտական 14 հոդված: «Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիալական արդյունքը 4.52 միավոր է: Ամբիոնն ու մրցութային հանձնաժողովը նրա թեկնածությունը պաշտպանել են միաձայն:

Բ. գ. թ., դոցենտ **Ալվարդ Հովհաննեսի Մեմիքջյանը** գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնում աշխատում է 2006 թվականից: Նա 2006-ին պաշտպանել է «Միֆը և արքեսիպային որոշ շերտեր արդի հայ արձակույթում» վերնագրով ատենախոսությունը՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Մեկ մենագրության, ուսումնամեթոդական ձեռնարկի և շուրջ տասնհինգ հոդվածների հեղինակ է: Վերջին հինգ տարիների սոցիալական միջին գնահատականը 4.67 է: Ամբիոնն ու մրցութային հանձնաժողովը նրա թեկնածությունը պաշտպանել են միաձայն:

Մ. գ. թ., դոցենտ **Արմենուհի Աշոտի Աշիկյանը** մանկավարժության ամբիոնի առաջատար դասախոսներից է: Արդյունավետ է նրա գիտամանկավարժական գործունեությունը: Նա ամբիոնում աշխատում է 2002 թվականից: Ունի գիտական 15 հոդվածներ: Ա. Աշիկյանը ԵՊՀ հայ բանասիրության և մի շարք այլ ֆակուլտետների բակալավրատում դասավանդում է «Մանկավարժություն» առարկան, սոցիալական մանկավարժություն բաժնում՝ «Մանկավարժության տեսություն-1», «Մանկության սոցիալական պաշտպանության համակարգի կառավարում», «Ընտանեկան դաստիարակության արդի հիմնախնդիրները», «Էթնոմանկավարժություն», մագիստրատուրայի «Կրթության կազմակերպում» բաժնում՝ «Մասնագիտության արդի հիմնախնդիրներ» և «Կրթության կառավարման մարդկային ռեսուրսներ» դասընթացները: «Դասախոսն ուսանողի աչքերով» հարցման վերջին ցուցանիշը 4.84 է: Ամբիոնն ու մրցութային հանձնաժողովը նրա թեկնածությունը պաշտպանել են միաձայն:

Փակ-գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրվեց ձայներ հաշվող հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

1. Մուրադյան Մամվել – նախագահ
2. Զրբաշյան Աշխեն
3. Մովսեսյան Սվետլանա

Փակ-գաղտնի քվեարկությունից հետո նախագահ Սամվել Մուրադյանը հրապարակեց արդյունքները.

Խորհրդի 29 անդամներից նիստին ներկա են եղել և քվեարկությանը մասնակցել են 25-ը:

Բաժանվել է 25 քվեաթերթիկ:

Քվեատուփում հայտնվել է 25 քվեաթերթիկ:

Քվեարկությունն ունեցավ հետևյալ արդյունքները՝

	կողմ	դեմ	անվավեր
1. Շուշանիկ Սամսոնի Գևորգյան	24	-	1
2. Ալվարդ Հովհաննեսի Սեմիրջյան	24	-	1
3. Արմենուհի Աշոտի Աշիկյան	24	-	1

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.**- 1. Հաշվի առնելով փակ-գաղտնի քվեարկության արդյունքները՝ հայ բանասիրության ֆակուլտետի դասախոսական կազմի ներքոհիշյալ անդամներին ընտրված համարել դոցենտի պաշտոններում՝

- 1. Շուշանիկ Սամսոնի Գևորգյան - հայոց լեզվի ամբիոնի դոցենտ
- 2. Ալվարդ Հովհաննեսի Սեմիրջյան - գրակ. տես. և գրաքննադ. ամբիոնի դոցենտ
- 3. Արմենուհի Աշոտի Աշիկյան - մանկավարժության ամբիոնի դոցենտ

2. Միջնորդել համալսարանի ռեկտորատին՝ հաստատելու հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի որոշումը և գործող կարգի համաձայն՝ նրանց հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

Վերջում գիտխորհրդի նախագահ պրոֆ. Ա. Ավագյանը շնորհակալություն հայտնեց նիստի բոլոր մասնակիցներին, և նիստը հայտարարվեց ավարտված:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ**

**ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**